Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 359 - Ա
որոշման

«ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՁԻՆՈՒՄ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԴԻՍՓԼԵՅՆԵՐՈՎ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության 80 հանրակրթական դպրոցների վերազինում նորագույն ինտերակտիվ դիսփլեյներով՝ որպես կրթության հիմնարար իրավունքի իրացման արդյունավետության բարձրացման միջոց: Տեխնիկան հնարավորություն կտա ժամանակակից դասավանդման մեթոդաբանության և վիզուալիզացիայի միջոցով, այդ թվում՝ Աշխարհացույց կրթական հարթակի օգտագործմամբ, բարձրացնել դասապրոցեսի արդյունավետությունը, հետևաբար՝ աշակերտների կրթության որակը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0056, Գայի պողոտա 4, ՀՎՀՀ՝ 01021075)
4.	Ծրագիրը կատարողը	«Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0056, Գայի պողոտա 4, ՀՎՀՀ՝ 01021075)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության մարզերի հանրակրթական դպրոցներ, կրթության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	63,200,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության մարզերի 80 հանրակրթական դպրոցներ, որոնք կգնահատվեն նախապես հրապարակված գնահատման սանդղակով՝ Գնահատող հանձնաժողովի կողմից հետևյալ չափանիշներով՝ 1) դիմում-փաթեթի ամբողջականություն.

		2) ծրագրի շրջանակում կատարված նախագծային աշխատանքի որակ (թեմայի արդիականություն, նորարարություն, հետազոտման խորություն, պատմա-գիտական ճշգրտություն, համայնքային ներգրավվածություն և այլն). 3) աշխատանքի ընթացքի որակ՝ սովորողների ներգրավվածություն, համագոր-ծակցություն, դերաբաշխում, կիրառվող գործիքակազմ և այլն. 4) օգտագործված աղբյուրների հարստություն. 5) տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառում. 6) նախագծային աշխատանքի ներկայացման որակ. 7) վերջնարդյունք և դրա կիրառելիություն:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հուլիսի 1-ից մինչև 2027 թվականի հունվարի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակում նախատեսվում է դիմում-հայտերի ընդունում և մշակում, դիմումատու դպրոցների հետ վերապատրաստումներ 21-րդ դարի հմտություններ, նախագծային ուսուցում, ՏՀՏ և այլ թեմաներով, դպրոցների կողմից «Քարտեզագրելով Հայաստանի բնության ապագան» խորագրով նախագծային աշխատանքի իրականացում, կատարված աշխատանքների գրավոր ներկայացում, Գնահատող հանձնաժողովի ձևավորում (2023, 2024, 2025 թվականներին հանձնաժողովում ներգրավված են եղել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն» հիմնադրամի, հանրակրթա-կան ոլորտի այլ ներկայացուցիչներ), գնահատում և առավելագույն միավոր հավաքած դպրոցներից 80 հաղթող դպրոցների ցանկի ձևավորում, տեխնիկայի նվիրաբերում դպրոցներին և այցելություն շահառու դպրոցներ, որի համար անհրաժեշտ է ձեռք բերել 80 հատ ինտերակտիվ դիսպլեյ՝ 63,200,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հուլիսի 1-ից մինչև 2027 թվականի հունվարի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	80 հատ ինտերակտիվ դիսպլեյի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 63,200,000 դրամ արժողությամբ:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի շրջանակներում «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամը համագործակցում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի հետ: Աշխարհացույց կրթական հարթակը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից երաշխավորված է որպես ուսումնաօժանդակ գործիք:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

17.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ